



Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ

ԿՈՎՆԱՍԻ  
ՊԵՐԻՆ

ՊՈՍՏԱՆ





А. С. ПУШКИН

# КАВКАЗСКИЙ ПЛЕННИК



ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО  
ЕРЕВАН — 1 9 3 7

---

891.71

7-90

Ա.Ս. ՊՈՒԾԿԻՆ



ՊՐԻՆՏՆԵՐ Է 1961 թ.

# ԿՈՎԿԱՍԻ ԳԵՐԻՆ

~~488~~

A 3522



ՊԵՏԱԿԱՆ ԶՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ --- 1 9 3 7




LIBRARY

1111

1881






## ՆԱԿԻՐՈՒՄՆ

Ընդունիր դու ջերմ ժպիտով, ընկեր,  
Նվիրարերունն ազատ մուսայի:  
Քեզ նվիրեցի անա հալածված քնարի յերգեր,  
Յեկ ներշնչումը իմ ազատ պահի:  
Յերբ առանց մեղքի ու անմխիթար կործան-  
վում եյի,  
Յեկ զըրպարտության շշուկը լսում ամեն կող-  
մերից,  
Յեկ դաշույնը սառ դավաճանության,  
Յերբ սիրո ծանր յերազնեքը ինձ  
Մորմոքում եյին և մահացնում,  
Քեզ մոտ դեռևս յես դանում եյի իմ հանգստու-  
թյունն.  
Յեկ հանգչում եյի յես սրտով—իրար սիրում  
եյինք մենք:  
Վրաս զոթորկի մոլեգնությունը դարձավ ու-  
ժասպառ,  
Յես աստվածներին որհնեցի խաղաղ ապաստա-  
րանում:  
Յեկ մեր անջատման տխուր որերին,



Նետերի ամպի ներքո թշնամու, արյունոտ  
դաշտում,  
Ընարյալ մանուկ, սլացար և դու հալարտ թռիչ-  
քով:  
Ինչպես քաղցր զոհ, ինչպես հույսերի մի ծա-  
ղիկ շիտակ,  
Քեզ փայփայեց նա՝ քո հայրենիքը դուրգու-  
րանքով լի:  
Յես վաղ գչացի վիշտը և ընկա հալածանքի  
տակ,  
Յեզա զոհ դավի, զբարտանքներ և տգետների:  
Բայց ազատությամբ և համբերությամբ սիրտս  
կոփելով,  
Սպասեցի անհող յես որերին վառ,  
Զընկճվեց պոետն—յերջանկությունը բարեկամ-  
ներին  
Քաղցր ըսփոփանք յեղավ ինձ համար:



## Ա.Ռ.Ա.ՋԻՆ, ՄԱՍ

Առւելում, իրենց շեմքերին մոտիկ,  
Չերքեղներն անա սլարասլ նստոտած,  
Խոսում են նրանք՝ Կովկասի վորդիք,  
Ռազմի, կործանիչ գուժերից անցած,  
Գեղեցկությունից իրենց ձիերի,  
Վայրի գգվանքի վայելքներից շատ,  
Հիշում են նրանք անցած որերի  
Հարձակումները անհաղթ, անվկանդ,  
Խարեյություններ նենգ իշխանների,  
Նրանց թրերի դարկերը դաժան,  
Յեւլ գիպուկ նետերն անխուսափելի,  
Ավեր գլուղերի մոխիրներն այնքան,  
Գգվանքը սևաչ գերուհիների:

Յեւլ զրույցներն են հոսում անդորրում,  
Լուսինն է լողում գիշերվա մութում.

Հանկարծ նրանց դեմ՝ նստած իր ձիուն—  
Մի չերքեզ: Արագ՝ արկանով քաշում,  
Բերում ե իր հետ մի ջահել գերի:  
Ահա ոուս,—գոռաց բռնողն ավարի:  
Այդ կանչի վրա վազեց դեպի ցած  
Առւելն անողոք բազմություններով,  
Սակայն գերին ա՛յդ և համր և սառած,  
Յեւ արկանակված գլխով ու դեմքով՝  
Դիակի նման մնում եր անշարժ:  
Թշնամիների դեմքը չի տեսնում,  
Զի լսում աղմուկ, սպառնալիքներ.  
Իր գլխին մահվան քունն ե սավառնում  
Յեւ սառնություն ե շնչում մահարեր:  
Յեւ չերիտասարդ գերին դեռ յերկար  
Պառկել եր ծանր ուշաթափ յեղած,  
Իր գլխի վրա կեսորն արևառ  
Արդեն վառվում եր ուրախ փայլ առած.  
Յեւ վոգին կյանքի զարթնեց նրա մեջ,  
Անորոշ տնքոց լավեց շուրթերում.  
Արեգակի ջերմ շողով տաքացած՝  
Թշվառը կամաց տեղից բարձրանում,  
Ազոտ հայացք ե դցում չորս բոլոր...  
Յեւ տեսնում ե, վոր իր դեմն անառիկ

Լեռնակուլտեր են կանգնել հանդիման—  
Վորջեր ավազակ անահ ցեղերի,  
Չերքեղյան ազատ կյանքի ապաստան:  
Իր գերությունը հիշեց պատանին,  
Ինչպես յերազի սոսկալի տագնապ,  
Յեւ լսեց ահա, վոր զրնգացին  
Հանկարծ վտաները իր շղթայակապ:  
Ամեն բան ասաց ձայնն անդ սարսուռն,  
Բնությունն իր դեմ դարձավ մթագնած:  
Մնաս բարով, դու սուրբ ազատություն...  
Նա ճորտ է:

Պառկած՝ հյուզի յետևում —  
Փշերով պատած ցանկապատերում:  
Չերքեզներն դաշտումն են—չկա հսկող,  
Ամեն ինչ լուռ է դատարկ առւլում:  
Նրա դեմ ահա հագած կանաչ քող՝  
Հարթավաչրերն են ամայի փովում:  
Այնտեղ միակերպ գազաթներով կոր  
Բլուրների պարն է ահա ձգվում:  
Նրանց արանքում ճամբան մենավոր  
Անհետանում է մռայլված հեռվում:  
Յեւ կուրծքը ահա ջահել այդ դերու  
Ալեկոծվում է ծանր խոհերում...

Տանում ե հեռու ճամբան Ռուսաստան,  
Յերկիրն, ուր հպարտ անհոգ սկսեց  
Նա վառ որերը իր ջահելության,  
Ուր վոր առաջին խինդը ըմբռնեց,  
Ու իր սիրածին սիրեց անսահման,  
Ուր վոր հասկացավ տանջանքն ահարկու,  
Ուր փոթորկալի կյանքով խորտակեց  
Հույսեր, խնդություն, ըղձերն իր հողու.  
Յեւ լավ որերի հուշերը անեղծ  
Նա իր թառամած սրտում ամփոփեց.

. . . . .  
. . . . .

Մարդկանց ու աշխարհն փորձեց ու յեղավ  
Տմարդի կյանքի գնին նա տեղյակ,  
Մտերիմների սրտում գտավ դավ,  
Սիրո տենչերում՝ անմիտ մի յերազ.  
Հոգնած՝ հասարակ մի զոհ լինելուց —  
Վաղուց անարգված սին ունայնության,  
Յեւ թշնամական, չար յերկդիմության,  
Յեւ պարզմտանի ըամբասանքների,  
Ընկերն բնության—լքողն աշխարհի—  
Թողեց յերկիրը նա իր հարազատ,  
Թռավ նա հողը հեռավոր յերկրի,

Վեհ ազատութեան ցնորքով զվարթ:

Ազատութեան, քեզ, նա քեզ եր մենակ  
Ունայն աշխարհում փնտրում դեռ յերկար:  
Սիրտը խորտակած իր կրքերի տակ,  
Անտարբեր՝ դեպի ըղձեր ու քնար,  
Հուզմունքով լեցուն լսում եր բոլոր  
Քեզնով ներշնչված յերգերը հզոր.  
Յեզ հավատով լի, ազոթքներով հուր  
Քո հպարտ կուռքն եր նա գրկում ամուր:

Վերջացավ... Վորպես նախտակ հուշի  
Աշխարհում վոչինչ նա ել չի տեսնում.  
Յեզ դուք, դուք նրա յերազներ վերջին,  
Յեզ դուք եք նրա աչքից թագնվում:  
Նա ճորտ ե: Հակած գլուխը քարին՝  
Սպասում ե նա, վոր մայրամուտին  
Իր տխուր կյանքի բոցն ել կմարի,  
Յեզ ծարավում ե դամբանի շուքին:

Լեռան յետևում արևն ե մթնում.  
Հեռվում թնդչուն ե հնչում աղմուկով.  
Ժողովուրդն հանդից աուլն ե մտնում  
Փայլուն, շողշողուն գերանդիներով:

Յեկան: Վառվեցին լույսեր տներում,  
Յեկ քիչ-քիչ լոհց աղմուկը անկարգ,  
Յեկ գիշերային խաղաղ ստվերում  
Գրկվեց ամեն ինչ՝ գգվանքով հանդարտ.  
Քարոտ ճամբեքով վազելով արագ՝  
Շողում ե հեռվում լեռնային աղբյուր.  
Կովկասի քնած գագաթները լուռ,  
Հագել են ամպի սպիտակ վերմակ...  
Բայց ո՞վ ե ահա լուսնի շողերով  
Խորին լուսթյան մեջ գալիս կամաց,  
Թույլ, գաղտագողի քայլեր անելով:  
Ռուսն ուշքի յեկավ: Նրա դեմ դիմաց  
Համր, նրբագեղ վողջույնով ահա  
Մի ջահել չերքեզ աղջիկ ե կանգնած:  
Յեկ լուռ նայում ե նա այդ աղջկան,  
Խորհում ե, վոր սուտ մի չերազ ե այն,  
Հողնած հույզերի մի խաղ ե դատարկ:  
Լուսնի շողերով քիչ լուսավորված՝  
Ժպիտով սփոփիչ խղճահարության,  
Ծուռնի իջնելով՝ աղջիկը կամաց  
Մառը կումիսը բռնած իր ձեռքին՝  
Հանդարտ մատուցեց գերու շրթունքին:  
Բայց նա մոռացավ անոթն այդ բուժիչ,

488  
A 3522  
T

Ծարավի հողով փորոնում եր նա  
Հաճելի խոսքի հնչյունը դյուլթիչ,  
Յեվ հայացքները ջահել աղջկա:  
Նա չի հասկանում խոսքերը ոտար,  
Բայց նուրբ հայացքը, ջերմը ալտերի,  
Բայց ձայնը քնքույշ ասում ե անա—  
Սպրիբ... և կյանք ե ստանում գերին:  
Յեվ հավաքելով մնացորդն ուժի,  
Այդ հոգեպարար հրամանին հլու,  
Բարձրացավ փոքր ինչ գավաթով բուժիչ  
Կոտրեց ծարավի տանջանքները լուռ:  
Հետո նա նորից քարին ե թեքում  
Ծանրաբեռնըլած գլուխը իրա,  
Սակայն մարմրուն հայացքը նրա,  
Չերքեղուհուն եր շարունակ ձգտում:  
Յեվ նրա դիմաց յերկար ու յերկար  
Նստեց աղջիկը խոհերով լեցուն,  
Յեվ կարծես համր իր կարեկցանքով  
Նա սփոփել եր ցանկանում գերուն:  
Շուրթերն ամեն ժամ՝ իր կամքից անկախ,  
Սկսվող խոսքի հնա բացվում եյին.  
Նա հառաչում եր և աչքերն հաճախ  
Արտասուքներով փողոզվում եյին:



Անցկացան որեր, նման սավերի  
 Լեռներում՝ հոտի մոտը շղթայված,  
 Անց ե կացնում իր որերը գերին:  
 Քարանձավների զովությունը թաց  
 Ծածկում ե նրան ամուսն շոգերին,  
 Իսկ յերբ լուսնեղջյուրն արծաթյա շողով  
 Փայլում ե մուսլ սարի յետևում,  
 Չերքեզուհին այն, շուքոտ կածանով,  
 Գերի տղային գինի չե բերում.  
 Բերում ե կումիս, բուրոզ մեղրահաց,  
 Բերում ե և հաց՝ ճերմակ, ինչպիս ձյուն.  
 Նրա հետ թաքուն ընթրիք բաց արած՝  
 Քնքույշ հացացքը նրան ե հառում,  
 Չուլում ե խոսքին անհասկանալի՝  
 Խոսակցությունը աչքի նշանի՝  
 Յերգում նրա մոտ և յերգ լեռների,  
 Յեղ յերգն չերջանիկ վրաց աշխարհի:  
 Յեղ հիշողությունն անհամբերատար  
 Նրան հաղորդում ե լեզուն ոտար:  
 Առաջին անգամ հոգով կուսական  
 Սիրեց, ճաշակեց նա յերջանկություն.  
 Բայց ոուսը վաղուց կորցրիլ եր արդեն  
 Իր ջահել կյանքի հեշտասիրությունն:

Սրտով պատասխան սալ չկարաց նա  
Սիրոն մանկական, սիրոն սրտաբաց—  
Վախեցավ, գուցե մտքում արթնանա  
Մոռացված սիրո յերազը հանկարծ:

Հանկարծ չի թոշնում մեր ջահելությունն,  
Հանկարծ չեն լքում բերկրանքները մեզ,  
Անսպասելի մի ուրախություն  
Կհամակի մեզ դեռ հաճախակես:  
Բայց դուք, կենդանի տպավորումներ,  
Յեվ սկզբնական դու սեր առաջին,  
Հափշտակության յերկնային դու բոց—  
Դուք սավառնելով չեք դառնում կրկին:  
Յեվ թվում եր, թե գերին այդ անհույս  
Ընտելանում եր իր կյանքին տրտում:  
Դերության թախիծ—հուրը խռովահույզ,  
Թագցնում եր նա իր հոգու խորքում:  
Մռայլ ժայռերի մեջ թափառելով,  
Վաղ առավոտվա գով կիսամութին,  
Հառում եր նա իր հայացքն հիացքով  
Հեռվում բարձրացող լեռների կույտին՝  
Ճերմակ, կարմրավուն, կապույտ  
չերանգով:

Աքանչիլի և շքեղ պատկերներ։  
 Հավիտենական դահերը ճյուղի,  
 Աչքին թվում էր, վոր այդ գազաթներն  
 Ամպերի անշարժ շղթա չե հիմի,  
 Նրանց շրջանում յերկպլուխ վիթխարին,  
 Շողշողալով իր սառցե սլահում՝  
 Ելլրուան և ահա վեհ ու ահագին  
 Յերկնի կապուչտում տալիս ճերմակին։  
 Յեվ յերբ՝ խառնված խուլ գոլորդներին,  
 Փոթորկից առաջ վորոտն էր թնդում,  
 Հաճախ էր գերին աուլի գլխին՝  
 Առանց շարժվելու, լեռանը նստում։  
 Ամպերըն էյին մխում վոտքի մոտ,  
 Փռչին պտտվում թռչում էր հանդում,  
 Յեղջերուն արդեն վազում էր չերկչոտ՝  
 Անկյուն փնտռելու ժայռի արանքում։  
 Յեվ արծիվները՝ քերծերից յերնում,  
 Յերկնքում իրար ձայն էյին տալի,  
 Զսկերի աղմուկ, հոտերի մայուն,  
 Խլացընում էր մրրիկն ահալի։  
 Յեվ հանկարծ դաշտում անձրև ու  
կարկուտ  
 Թափվում են ամպից, կայծակի միջով։

Ու ավերելով զառիվայր ու խուժ,  
Դարավոր քարերն տեղից շարժելով՝  
Հեղեղներ ելին հոսում անձրևի—  
Իսկ գերին՝ այնտեղ, կատարին լեռան  
Վորտտուն ամպից դենը, մեն-միայն,  
Ամպրոպի համար անհասանելի,  
Սպասում եր լուռ դարձին արևի.  
Յեվ մրրիկների վռռնոցը անթափ  
Ունկնդրում եր նա ինչ վոր խնդութլամբ:

Իաց լելրոպացու վողջ ուշքը դարձավ  
Դեպի ժողովուրդն այս ըսքանչելի.  
Նրանց հավատը, բարքերը տեսավ,  
Դաստիարակումը լեռնականների,  
Յեվ պարզությունը սիրեց այդ կյանքի,  
Հյուրընկալություն, ծարավը ռազմի,  
Արագությունը ազատ շարժմունքի,  
Վաղքը թեթևոտ և ուժը բազկի.  
Նստում, նայում եր նա յերկար ժամեր՝  
Ինչպես լերբեմըն չերքեղը սրտոտ  
Անցնում եր արձակ դաշտեր ու լեռներ  
Հագին յափունջի, գլխարկով բրդոդ,  
Թեքված աղեղին, ամուր հենելով

Բարեկազմ վոտներն ասպանդակներին՝  
Սլանում եր նա նժույգի կամքով,  
Նախորոք իրեն վարժելով մարտին:  
Հիանում եր նա հագուստով նրանց՝  
Թե պատերազմի և թե հասարակ.  
Չերքեղը զենքով ե միշտ զարդարված,  
Հպարտ և գոհ և նա զենքերի տակ.  
Վրան կապարճը հըրազեն, վահան,  
Կուրանյան աղիզ, դաշույն ու արկան,  
Ընկերուհին և իր թուրը հավերժ՝  
Թե պարապ պահին և թե գործի մեջ:  
Վոչինչ, վոչ մի բան նրան չի ընկճում,  
Վոչ վոք չի խփի—հեծյալ, հետիոտ՝  
Միշտ միևնույնն և, ու միշտ նույն  
տեսքում՝

Յեվ անհաղթելի և միշտ անհողզողդ:  
Սարսափն և անհոգ վողջ կազակներին՝  
Հպարտությունն իր—նժույգն անվեհեր—  
Սերունդ լեռնային յերամակների,  
Մի համբերատար, հեազանդ ընկեր:  
Բարձր խոտում կամ ալբում նրա հետ  
Նենդ ավար սուռն մտնում և դարան,  
Հանկարծ ինչպես մի անակնկալ նետ՝

Ճամբորդ տեսնելով նետվում և վրանս  
 կովի. յեւթն անդալ մի ակնթարթում  
 վճռում և նրա հարվածը կարող,  
 Յեւ ուղևորին լեռնային կիրճով  
 Բաշում և արդեն արկանը թռչող:  
 Սլանում և ձին իր ամբողջ թափով,  
 Լցված հրեղեն մի արխությամբ,  
 Թփեր, ճահիճներ, ժայռ, ձոր ու անտառ—  
 Ազատ ճամբա յեն բոլորն իր համար:  
 Յետևից հետքն և վազում արնամած,  
 Ամայության մեջ հնչում և դովյուն.  
 Դեմ զետակն և աղմկում վրվրած—  
 Սլանում և նա խորքովը յեռուն:  
 Ճամբորդը նետված հատակը ջրի  
 Պղտոր ալիքն և այնտեղ կուլ տալի,  
 Ուժասպառ դարձած աղերսում և մահ,  
 Տեսնում և նրան իր գիմաց անա:  
 Բայց նետի նման զորավոր իր ձին  
 Փրփրադեղ ափն և հանում չերքեղին:

Կամ թե ճյուղավոր մի կոճղ բռնելով՝  
 Վոր փոթորիկն և նետել գետն ի վեր,  
 Յերբ վոր, շղարշի պես՝ բլուրներով

Լուսնագուրկ զիշերն ե փռում ըստվեր,  
Չերքեզն արմատի վրա դարավոր  
Կախում ե ամեն ճյուղից՝ չորս ըստր,  
Իրին՝ մարտական զենք ու զրահներ,  
Վահան, սաղավարտ, զրահ, յափունջի,  
Կապարճ ու աղեղ—նրա յետևից՝  
Առանց հոգնելու, առանց շշուռնջի  
Նետվում ե ինքն ել գետը փրփրալից,  
Գիշեր ե խորունկ: Գետն ե շառահում,  
Ջորավոր հոսանքն ե նրան քաշում  
Անծայր յերկայնքով հեռու ափերի  
Ուր վեր բարձրացած հողաթմբերին՝  
Երբված նիզակին, գիշերվա մթնում,  
Կազակներն գետի մութ վազքն են

դիտում—

Իսկ սևին տալով խիտ մառախուղում,  
Չարագործի զենքն առաջ ե լողում...  
Ինչի՞ մասին ես մտածում, կազակ,  
Նախկին մարտերն ես մտաբերում դու,  
Մահվան դաշտի մեջ ոթևան ու հա՞րկ,  
Փառաբանական աղոթքը գնդում,  
Յիվ հայրենի՞քը... Նենգ ու խարդախ

քուն...

Մնացեք բարով, դուք ազատ շեներ,  
Յեւ դու, խաղաղ Դոն, և հալւրական  
տուն,

Պատերազմներ ու սիրուն աղջիկներ,  
Ափը դուրս չեկալ թշնամին թաքուն,  
Նեան և դուրս գալիս կապարճից նրա,  
Սլացիկ թռչում—և կաղակն ահա  
Արնտոված թմբից ներքև և ընկնում:

Իսկ յերբ վոբ խաղաղ ընտանիքն առած  
Չերքեզն հայրական բնակարանում  
Վատ յեղանակին լինում և նստած,  
Յեւ կրակներն են վառվում թաղարում,  
Յեւ հավատարիմ ձիուց թռչելով  
Յեկվորն ուշացած ամայի սարում՝  
Իջեվանում և նրա ոջախում  
Յեւ կրակի մոտ ամաչկոտ նստում՝  
Տանտերն այդ պահին, բարեհաճ կամքով,  
Յելնում, վողջունում և փաղաքշաբար,  
Յեւ մատուցում և բուրոդ գալաթով  
Իր հյուրին՝ կարմիր գինի բերկրավառ:  
Թաց յափունջու տակ, հյուղում ծխով լի,  
Ճամբորդը խաղաղ քուն և վայելում,

Յեւ յառաջնայան թողնում ե ելի  
Հյուրընկալ հարկը, զնում, հեռանում:

Պատահում եր, վոր ուրախ բայրամին  
Պատանիներն են բաղմությամբ խմբվում:

Յեւ փոխարինում ե խողը-խողին:

Մերթ սպառելով կապարձը լեցուն՝

Նրանք թևավոր նետերով իրենց

Արծիվներին են խոցում ամպերում,

Մերթ բլուրներից ժայռոց բարձրաբերձ,

Նրանք շարքերով իրենց անհամբեր,

Նշան տալուն պես՝ թափվում են

հանկարծ,

Հարվածում հողը, ինչպես յեղնիկներ,

Վողջ հարթավայրը ծածկում փոշու տակ,

Յեւ վաղ են տալիս, դոփում ներդաշնակ:

Բայց տխուր ե այս աշխարհն միակերպ

Սրտերին, ծնված մարտերի համար,

Յեւ հաճախ խաղերն ազատ տոնական,

Լինում են դաժան խաղերի հետ խառ:

Հաճախ են փայլում թրերն ահալի,

Խնձույճների խենթ կայտառությամբ լի:

Յեւ զլուիններն են թռչում ճորտերի,  
Յեւ մանուկներն են ուրախ ծափ տալի:

Սակայն դիտում եր ուսը անտարբեր  
Զվարճություններն այս արյունալի,  
Սրբում եր առաջ նա փառքի խաղեր,  
Այրվում կործանման ծարավովը լի:  
Նա՛ գերի պատվին իր անագորույն,  
Տեսնում եր վախճանն իր դեմ հանդիման,  
Սառը և հաստատ մենամարտերում,  
Դիմավորելով կապարին մահվան:  
Դուցե խոհերի տակ ծանրաբեռնված  
Այն ժամանակներն եր մըտաբերում,  
Յերբ, ընկերներով իր շրջապատված՝  
Նա ազմկաձայն խնճույք եր անում...  
Արդյոք ավստո՞ւմ եր որերն անցած,  
Որերը բոլոր խաբված հույսերի,  
Թե՛ դիտում եր նա հետաքրքրված՝  
Դաժան պարզությամբ նրանց խաղերի:  
Յեւ վողջ բարքերը բիրտ ժողովրդի  
Կարգում եր նա այս ճշգրիտ հայելում,  
Խորին լուսթյամբ պահում եր թաքուն,  
Շարժումներն ամբողջ գերին իր սրտի,

Փոփոխություններ չեյին նկատուամ  
Նրա բարձրանիստ ու լայն ճակատին:  
Խիղախությունից նրա սառնարյուն  
Զարմանում եյին չերքեզներն անեղ,  
Նրա ջահել կյանքն եյին խնայում,  
Շշնջում եյին իբար հետ աջնտեղ,  
Հաջող ավարով այդ հպարտանում:

ՅԵՐԵՐՈՐԳ ՄԱՍ

Ճանաչեցիր դու, աղջիկ լեռների,  
 Զմայլանք սրտի, կյանքի քաղցրություն,  
 Քո հայացքը հուր, անմեղությամբ լի՝  
 Արտահայտում եր սեր և խնդություն:  
 Յերբ քո ընկերը գիշերվա մթնում  
 Համբուրում եր քեզ համր գգվանքով՝  
 Դու յերկրալին կյանքն եյիր մոռանում,  
 Վառված ցանկությամբ և հաճույքներով:  
 Դու ասում եյիր— գերի սիրելի,  
 Ուրախ դարձրու հայացքդ նկուն,  
 Դու քո գլուխը իմ կրծքին հենիր,  
 Մոռցիր հալըննիք և ազատություն:  
 Ուրախ եմ՝ քեզ հետ թաքնվիլ ամա  
 Անապատի մեջ, իմ հոգու արքա,  
 Սիրիբ ինձ, վոչ վոք դեռ մինչև հիմա,  
 Զի համբուրել իմ աչքերը անգամ:  
 Յեզ յերբեք մահճիս մեն ու միայնակ՝

Ձահել ու սևաչ չերքեզը թաքուն  
Ձի մտեցել լուռ, գիշեր ժամանակ:  
Համարվում եմ յես աղջիկ խստասիրտ,  
Յեզ անողոք իմ գեղեցկութունով.  
Բայց պատրաստ ե իմ վիճակը շուտով.  
Ինձ՝ հայրս, ինչպես և յեղբայրս բիրտ  
Ծախել են ուզում չսիրած մարդու,  
Ոտար աուլում արժեքով վոսկու.  
Հորս, յեղբորս կաղաչեմ սակաչն,  
Թե չե՝ կգտնեմ յես դաշույն կամ թույն:  
Անըմբռնելի ուժով կախարդուն  
Հրապուրվել եմ քեզանով անքան.  
Միրում եմ յես քեզ, գերի սիրելի,  
Հոգիս քեզնով ե դմալված ու լի...

Սակայն նա անձայն մի ափսոսանքով  
Նայում եր կրքոտ աղջկա վըրա,  
Յեզ լցված ծանր մտածմունքներով  
Միրային խոսքերն եր լսում նրա:  
Նա վերացել եր. խռնվել եյին  
Հիշողություններն անցած որերի,  
Նույնիսկ մի անգամ աչքերից նրա  
Արցունքը թափվեց կարկուտի նման:

Նստե՛լ եր սրտին նման կապարի  
Միրո թախիժը առանց հուշերի,  
Վերջապես ջահել կույսի հանդիման  
Թափեց զեղուններն իր տանջանքների:

Մոռացիր դու ինձ. քո զմայլանքին,  
Քո անմեղ սիրոն չես չեմ արժանի,  
Մի կորցնի ինձ հետ որերըդ անզին,  
Կանչիր դու ուրիշ, մի այլ պատանի:  
Քեզ համար իր սերն իմ հոգու, սրախ,  
Թախժոտ սառնության կփոխարինի.  
Կըլինի շիտակ, կըզնհատի  
Հայացքդ քնքույշ, տեսքդ գեղանի,  
Յե՛վ ջերմությունը ջահել համբուլչի,  
Յե՛վ նրբությունը խոսքիդ բոցավառ.  
Առանց վայելքի, առանց ցանկության,  
Կըքերի զո՛հ եմ դառնում զալկահար:  
Դու դժբախտ սիրո հետքեր ես տեսնում,  
Հոգու փոթորկի հետքեր սոսկալի.  
Դու թող ինձ. սակայն դու խղճա տրտում  
Ճակատագիրն իմ տառապանքով լի.  
Դժբախտ բարեկամ, ինչո՞ւ դու առաջ  
Չհայտնվեցիր դեմն իմ աչքերի,

Յերբ յես հուշսերին և հիասքանչ  
Յերազներին դեռ հավատում եյի:  
Յերջանկությունը մեռալ ինձ համար,  
Ուշ ե: Հուշսերի ցնորքը թռալ.  
Ընկերըդ թողեց հեշտանքները վառ,  
Քնքուշ հուշերի համար քարացալ...

«Ինչքան դժվար է շուրթերով մեռած  
Կենդան համբուլըին գեթ տալ  
պատասխան,

Քնքուշ աչքերիդ արտասովակալած  
Սառը ժպիտով չեղնել հանդիման:  
Տանջանք կրելով խանդից ապարդյուն,  
Քնելով հոգով քո առանց հույզի,  
Քո ընկերուհու տարփալի գրկում,  
Ինչ ծանր ե խորհել ուրիշի մասին...

«Յերբ այդպես դանդաղ ու այդպես  
նրբին

Հագնեում ես դու իմ համբուլըներով,  
Յեմ քեզ համար այդ ժամերն սիրային  
Անցնում են այնպես արագ, անվրդով—  
Այդ ժամանակ չես ցրված ու նկուն

Կուլ տալով արցունքն իմ լուսթյան ճեջ,  
Կանգնած իմ դիմաց, ինչպես յերազում,  
Տեսնում եմ մի դեմք՝ սիրելի հավերժ,  
Նրան եմ կանչում, դեպի նա ձգտում,  
Լուում, չեմ տեսնում, և չեմ լսում քեզ,  
Մոռացության մեջ՝ քեզ եմ հանձնելում,  
Թաքուն գրկում եմ այդ ցնորքը յես:  
Լալիս եմ այստեղ յես նրա համար,  
Թափառում ե նա ինձ հետ ամենուր,  
Յեվ մոռյլ թախծով և նա անդադար  
Լցնում վորբացած իմ հոգին տխուր:

«Թող ուրեմն իմ կապանքները ինձ՝  
Յեվ յերազները իմ մեկուսացած,  
Հիշողություններ, արցունք ու թախիժ.  
Կարեկից լինել չես կարող նրանց:  
Խոստովանություն լսեցիր սրտի,  
Ներիր ինձ... Ձեռքդ տուր — հրաժեշտի:  
Կանացի սերը շուտ և ազատվում  
Անջատման սառը տխրություններից.  
Անցնում ե սերը, ձանձրույթն և պատում,  
Յեվ գեղեցկուհին սիրում ե նորից»:

Բաց շրթունքներով աղջիկը նստած  
Հեկեկում եր դեռ առանց արցունքի,  
Անշարժ հայացքում մշուշով պատած  
Արտահայտություն կար նախատինքի.  
Դողում եր գունատ, նման սովերի.  
Նրա սառ ձեռները հանգչում եյին  
Ձեռների ավում իր սիրահարի.  
Յեվ ի վերջո իր վշտերն սիրային  
Տխուր խոսքերի միջով հորդեցին.

«Ախ ոուս իմ, ոուս իմ, ախ ինչու  
համար,

Չճանաչելով յես քո սիրտը լուս,  
Յես քեզ հավիտյան յեղա անձնատուր:  
Մոռացության մեջ՝ քո կրծքի վրա  
Կարճատև յեղավ հանգիստն աղջկա,  
Քիչ գիշերների բաժին խինդավառ  
Ճակատագիրը ուղարկեց նրան:  
Յեվ կգա՞ն արդյոք յերևև ելի,  
Թե՞ հավիտ կորավ ամեն խնդություն...  
Դու կարող եյիր և խաբել, գերի,  
Միամիտ, անփորձ իմ ջահելությունն,  
Թեկուզ և միայն խղճալով հենց ինձ,

Լուսթյամբ և կեղծ գուրգուրանքներով,  
կամոքեյի քո վիճակը նորից  
Քնքույշ, հնազանդ իմ խնամքներով.  
Յես կհակեյի պահերը քնի,  
Անդորրը վշտոտ իմ բարեկամի.  
Դու չցանկացար... Սակայն ո՞վ ե, ո՞վ  
Քո հիանալի այդ ընկերուհին.  
Դու սիրո՞ւմ ես, ո՞ւր և սիրվա՞ծ ես

դու...

Հասկանում եմ յես քո տանջանքն ահա,  
Դե ներիր դու ել իմ լացն հեկեկուն,  
Մի ծիծաղիր իմ վշտերի վրա».

Լուսի, Հառաչն ու արցունքները ջերմ  
Խեղդեցին կուրծքը թշվառ աղջկա:  
Շուրթերը անխոս տրանջացին սեղմ,  
Գրկելով գերու ծնկներն, անըզգա՝  
Հագիվ շունչ քաշել կարողացավ նա:  
Յեվ հանդարտ ձեռքով գերին հանեց վեր  
Դժբախտ աղջկան ու ասաց նրան.  
«Մի լա, յես ել եմ բախտից հալածվել,  
Յեվ կրեմ սրտի տանջանքներ այնքան...  
Վոչ, փոխադարձ սեր չեմ իմացել յես.

Սիրելի եմ մենակ, տանջվել եմ մենակ,  
Յեւ վ մարում եմ յես ծխող բոցի պես՝  
Խուլ հովիտներում, մոռացութեան տակ:  
Կմեռնեմ՝ հեռու ամերից սիրած,  
Այս տափաստանն ինձ կլինի գերեզման,  
Այստեղ, վոսկերքիս վրա հալածված՝  
Կժանգակալի իմ ծանր շղթան»:

Լուսատուները գիշերվա հանգան.  
Թափանցիկ հեղում նշմարվում եյին,  
Զլունի պես ճերմակ կույտեր լիոնային.  
Նրանք՝ հայացքը ներքև, գլխահակ,  
Լուռ անջատվեցին, անխոս հեռացան:

Այդ ժամանակից հուսահատ գերին  
Շրջում եր մենակ առլի բոլոր:  
Արշալույսը տապ յերկնակամարին  
Բարձրացնում ե նոր որեր որեցոր.  
Յեւ հաջորդում ե գիշերն գիշերին.  
Ազատութուն զուր ե տենչում գերին:  
Հենց վոր շողում ե քարայծ թփերում,  
Հենց վոր ցատկում ե մի վիթ մութի

տակ,

Բռնկվում ե նա, շղթան զնգացնում,  
Սպասում՝ թե չի՞ սլանվում մի կազակ—  
Նա, վոր գիշերով ավրում ե գյուղեր,  
Նա, վոր անվեհեր փրկում ե ճորտեր:  
Կանչում ե... Լուռ ե չորս կողմը սակաջն,  
Լոկ ալիքներն են ճողփում մոլեգնած,  
Իսկ դազանն ահա մարդու հոտ առած  
Փախչում ե դեպի դաշտը մթամած:

Լսում ե այդ ուռս գերին՝ մի անգամ,  
Լեռներում հնչում ե կանչ ուղմական.  
«Իեպի ջոկ, թարուն»—վազում են,

կանչում,

Պղնձե սանձերն են զնգում, շաչում,  
Սև յափունջիներ, փաչլ զրահների,  
Յեռանդն ե յեռում թամբած ձիերի,  
Պատրաստ ե առլն արդեն հարձակման,  
Յեվ սլատերագմի վորդիք վայրենի  
Բլբից վորպես գետ, հորդեցին, անցան,  
Յեվ սլանում են ափով Կուրանի  
Գանձելու համար տուրքերը բռնի:

Առլն հանդարտվեց. խրճիթների մոտ

Հսկող շներն են քնած արևում:  
Ու մանուկները թխլիկ ու տկլոր,  
Ազատ աշխուժով զիլ են աղմկում:  
Նրանց պապերն են շուրջ բոլոր նստած՝  
Զիրուխի ծուխն և կապտում վոլորքով,  
Լսում են նրանք անշշուկ, լարված,  
Յերգն աղջիկների ծանոթ կրկներգով  
Ու ջահելանում և սիրտը նրանց:

### ՁԵՐՔԵԶԱԿԱՆ ՅԵՐՔ

#### 1

Գետում վազում և ալիքը խշշուն,  
Լեռներում անդորրն և գիշերային,  
Հոգնարեկ կաղակն և ահա ննջում,  
Կռանալով իր պողպատ նիզակին:  
Մի քնիր, կազակ, գիշերվա մութին՝  
Չեչենն և քայլում գետի այն ափին:

#### 2

Կաղակն և լողում ահա նավակով,  
Քաշ տալով ջրում գետային ուռևան:  
Կազակ, կխեղդի գետը հորձանքով,

Խնդրում ե ինչպես նա փոքրիկ մանկան՝  
Յերբ լողում ե նա շոգ ժամանակին.  
Չեչենն ե քայլում գետի այն ափին:

3

Ավանդական այդ ջրերի ափին  
Ծաղկում են փարթամ ու հարուստ  
շեներ:

Պարերի խումբն ե պարում ինդագին:  
Փախեք դուք արագ, ոուս յերգչուհիներ.  
Գեղեցկուհիներ, վաղեք տուն կրկին.  
Չեչենն ե քայլում գետի այն ափին:

Այդպես յերգեցին: Յեզ նստած ափին,  
Ռուսն յերազում եր փախչելու մտաին.  
Բայց շղթաները շատ ծանր են գերու,  
Գետն արագահոս, խորունկ ու յիւտն...  
Մինչ այդ՝ մութն ընկալ, աուլն մտալ  
քուն,

Ժայռադադաթներն մռայլ են ահա,  
Շողում են լուսնի լույսերը դժգույն  
Աուլի ճերմակ հյուղերի վրա.  
Յեզջերուններն են ջրափին ննջում,

Լուեց ուշացած կանչն արծիփների,  
Յեւ արձագանգում ե խուլ լեռներում  
Հեռավոր դոփյունն յերամակներիս  
Այդ պահին լսից ինչ վոր ձայն մեկի,  
Ինչ վոր աղջկա քողը շողշողաց,  
Յեւ անա տխուր դալկություն դեմքին՝  
Մոտեցավ գերուն աղջիկը կամաց.  
Շուրթերն սիրունի փնտրում են խոսքեր,  
Թախիծով լի յեն աչքերը նրա,  
Թափվում են ինչպես սև-սև ալիքներ  
Վարսերն իր կրծքի, ուսերի վրա:  
Մի ձեռքին նրա սղոցն եր փայլում,  
Մյուսին դաշույնը նրա պողպատյա,  
Թվում եր՝ կարծես, աղջիկը՝ թաքուն,  
Կովի յեր գնում, ուզմի քաջության:

Յեւ հռելով իր հայացքը գերուն  
«Փախիր դու,—ասաց կույսը լեռների—  
Չերքեզ դեմ չի գա քեզ վոչ մի տեղում,  
Շտապ, մի կորցնի ժամերն գիշերի.  
Վերցրու դաշույնը. թանձր խավարում  
Վոչ վոք հետքերը քո չի նշմարի»:

Սղոցը բռնած դողդոջունն ձեռքին,  
 Աղջիկը թեքվեց վոտներին նրա.  
 Յերկաթն և խզզում սղոցի տակին,  
 Թափվում և նրա արցունքն ակամա,  
 Յեկ շղթան պոկվում, զնգում և ահա:  
 «Ազատ ես—ասաց աղջիկը դերուն—  
 Փախիր» — սակայն խենթ հայացքը նրա  
 Արտահայտեց խոր սիրո ուժգնություն:  
 Տառապում եր նա: Աղմկոտ քամին  
 Սուլեղով՝ նրա քողն եր ծածանում.  
 Ռուսն աղաղակեց—«Ո, բարեկամ իմ,  
 Բռնն եմ, հավիտյան յես քոնն եմ մնում,  
 Թողնենք յերկուսով հողն այս տանջանքի,  
 Փախիր դու ինձ հետ»...—Վոչ, ուս, վոչ,  
յերբեք:

Անհայտացավ նա՝ քաղցրություն կյանքի,  
 Տեսա ամեն ինչ, տեսա խնդություն,  
 Ամեն ինչ անցավ, չքացավ և հետք:  
 Կլինի՞... սիրել ես դու ուրիշին,  
 Դու գտիր նրան և սիրիր նրան.  
 Իսկ յես թախծում եմ ել ինչի՞ մասին,  
 Ի՞նչ պատճառ ունեմ յես վհատության...  
 Ներիր ինձ... Սիրո որհնությունները .

Կըլինեն քեզ հետ յուրաքանչյուր ժամ:  
Ներիր, մոռացիր իմ տանջանքները,  
Տուր ինձ քո ձեռքը... մի վերջին

անգամ»:

Գերին ձեռները պարզեց աղջկան,  
Կյանք առած սրտով դեպի նա նետվեց,  
Յեւ նրանց յերկար համբույրն

անջատման

Իրենց սիրալին դաշինքն հաստատեց:  
Ձեռք-ձեռքի տված, վհատությամբ լի,  
Խոր լուսթյան մեջ իջան գետի ափ—  
Յեւ ոռւսը խորքի մեջ աղմկալի  
Արդեն լողալով փրփուր և տալի,  
Արդեն հասավ նա ժայռերը դիմացի,  
Արդեն բռնում և նրանցից գերին...  
Ալիքներն հանկարծ խուլ աղմկեցին,  
Յեւ հեռու տնքոց հասավ ափերին...  
Նա վայրի ափն և ահա դուրս դալի,  
Նայում և յետև... Ափերը պարզել,  
Ճերմակել և յին փրփուրներով լի,  
Բայց չկար չերքեղ աղջիկը ջահել,  
Վոչ ափին և վոչ լեռան լանջերին...

Ամեն ինչ մեռած... Գնած ասիերում  
Լավում ե թեթե լոկ ձայնը քամու,  
Յեւ լուսնի ներքո ճողփուն ջրերում  
Շերտավոր շրջանն ե անհայտանում:

Բոլորն ըմբռնեց...

Հրաժեշտ տալով

Վերջին հայացքի մեջ ե ընդգրկում  
Դատարկ առէլն իր ցանկապատերով,  
Դաշտերն, ուր գերին նախիրն եր

պահում,

Կածաններ, ուր նա կրում եր շղթան,  
Առուն, ուր հանգչում եր նա կեսորին,  
Յերբ յեւած դաժան չերքեղը լեռներ,  
Ծայր եր տալիս իր ազատ չերգերին:  
Նոսրացավ խորունկ խավարն չերկնքում  
Յեւ որը փովեց մռայլ դաշտերին:  
Արշալույսն չեւով: Կածանով, հեռվում,  
Ճամբա յեր կտրում աղատված գերին:  
Արդեն մշուշում նրա դիմացից  
Սվիններն եյին փայլում ուռաական,  
Յեւ ձայնում եյին իրար թումբերից  
Կազակներն աչնտեղ կանգնած պահապան:

ՎԵՐՋԵՐԳ

Յեզ մուսան, թեթև ընկերն չերազի,  
 Սահմանն Ասիայի թռչում եր ահա,  
 Յեզ իր ստակի համար Կովկասի  
 Վայրի ծաղիկ եր քաղում, ըերում նա:  
 Նրան զերում եր հագուստը դաժան  
 Պատերազմներում աճած ցեղերի,  
 Յեզ հաճախ այդ նոր հագուստը վրան՝  
 Ներկայանում եր ինձ կախարդուհին.  
 Ամայի դարձած աուլների շուրջ  
 Նա թափառում եր քաբաժայտերում,  
 Յեզ այդ վայրերում վորը աղջիկների  
 Տխուր չերգերն եր միայն ունկնդրում:  
 Միրում եր նաև շեներն ուղամական,  
 Ազդանշաններ քաջ կազակների,  
 Թումբերը խաղաղ, շիրիմ, դամբարան,  
 Յեզ աղմուկ, խրխինջ յերամակների:

Դիցուհին յերգի և զրույցների  
 Լի յե հուշերով իր բազմապիսի,  
 Գուցե թե կրկին կալատմի, կասի  
 Ավանդություններն անեղ Կովկասի:  
 Կալատմի վեպը հեռավոր յերկրի,  
 Յեվ Մասիսլավի մենամարտը հին,  
 Դավեր, կործանում բազում ուսների  
 Վրեժխնդիր վիր կանանց գրկերին:  
 Յեվ չերգում եմ չես փառավոր ժամն այն,  
 Յերբ վոր զգալով մարտն արյունաբեր,  
 Այդ արանջացող Կովկասի վրան  
 Մեր յերկրլիսանի արծիվն յելավ վեր,  
 Յերբ վոր Թերեքի վրա ալեհեր  
 Թնդաց առաջին վորտուր մարտի,  
 Յեվ դարգացին ուսաց թմբուկներ,  
 Յեվ կովի բովում Յիցիանովը մեր,  
 Հայասնըվեց ահա ճակտով անվեհեր.  
 Ո, հերոս, քեզ եմ յերգում հիմա չես  
 Կոտլարեվըսկի, Կովկասի մտրակ—  
 Ուր սլացել ես դփ լոթորկի պես՝  
 Ամեն բնթացք՝ վորպես սև վարակ—  
 Յեղեր ե ջնջել և վոչնչացրել...  
 Լքել ես՝ սուրդ վրեժխնդրութան,

Պատերազմը քեզ չի ուրախացնում.  
Պատվի խոցերով կարոտ հանգստյան,  
Պարսապ հանգիստն էս հիմա վայելում,  
Խաղաղությունն ու լուսթյունը տան...  
Բալց արևելքն է հառաչում ելի...

Կովկաս, խոնարհվիր ձյունապատ գլխով,  
Հանդարտ, Յերմուղոֆն է անա զավի:  
Յեղ լոց կովի ազմուկը մոլի:  
Ամեն ինչ ոուսաց սրին հպատակ.  
Կովկասի վորդիք, հպարտությամբ լի,  
Գուք մարտնչեցիք, սոսկալի ընկաք.  
Սակայն չփրկեց ձեզ արյունը մեր,  
Վոչ զբանները ձեր կախարդական,  
Վոչ լեռներ, վոչ ձեր ձիերն անվեհեր,  
Վոչ սերը վայրի ձեր ազատության:  
Բատիի ցեղի նմանողությամբ,  
Կուրանա Կովկասն իր նախնիքներին,  
Կմոռանա ձայնն ազահ մարտերի,  
Վերջ կգնի իր կովի նետերին:  
Յեղ ճամբորդն առանց վախի կգնա  
Կիրճերով, ուր դուք դրել եյիք բուն,  
Յեղ ձեր պատժի շուրջ կհյուսվի անա  
Լուրերի մթին մի ավանդություն:

1410



Թարգմ. Գ. Սարյան

Պատ, խմբագիր՝ [REDACTED]

Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան

Սրբագրիչներ՝ Հ. Մանուկյան և Հ. Գոլուխանյան

Տրված և արտադրության 7 փետրվարի 1937 թ.  
Ստորագրված և տպագրության 27 փետրվարի 1937 թ  
Գլավիլտի լիազոր 4—4506 Պատվեր 217, Հրատ. 9018  
Տիրաժ 3000

---

Պետհրատի տպարան, Յերևան II Կնունյանցի, № 4



գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0037858

Give to  
Lilava to

280

A  $\frac{I}{3522}$

564  
2 p/564